

Յանձկալի մեծարանացն անարգեալ կոյսք կիկոնուհիք ,  
 Ի դից տօնս եւ ի խրնձոյս ցայգապաշտօն Սպանդարմետին  
 Րզպատանին գիշատեալ արկին ի դաշտրս լայնաձիգս :  
 Եւ անդ իսկ ի ձիւնափայլ պարանոցէն խրզեալ կառափն  
 Յիագրեանն Հեբրոսի վարեալ ուղխիցըն թաւալգլոր ,  
 Եւ յն ինքըն ձայնն եւ լեզուն ցրրտասառոյց զԱւրիգիկէ  
 Ի պարզել ոգւոցն , աւանդ , զԱւրիգիկէ կարդայր ըզհեք ,  
 Օ՛ւելրիգիկէ գետեզերք բոլոր ընդդէմ կըրկնէին վանգ :

ՄՇԱԿԱԿԱՆՔ , ԳԻՐՔ Դ , ԹՈՂ 450-526 :

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նարոյեռն Ա յէլպա կղզի : ( Տես երես 82 )

Ընդ միջոցին որ Վաբուէոն աս իր պզտի տէրու թիւնը կը կառավարէր և իրեն բնիկ գործունէութեամբը շէնցընելով կը զարդարէր , մէյ մըն ալ ձայն ելաւ թէ կ'ուզեն զինքը աւելի հեռու տեղ մը քշել : Ա՛ննայի ժողովքին գումարմանց մէկուն մէջ Վաղղիոյ դեսպանը առաջարկէր էր թէ ինչպէս կարելոր էր զՎաբուէոն հեռացընել , եւ թէ կ'ուզէին պետութիւնները ապահով ըլլալ իր ձեռքէն , որովհետեւ Վարուպայի խաղաղութեանը համար մի միայն վտանգաւոր բան էր որ Վաբուէոն Խտալիոյ ու Բարուանսի փանայր մօտ կենայ . և թէ ինչպէս իր աքսորանքէն ձանձրացած կրնար անիկայ չորս օրուան մէջ Վէպպիոս անցնիլ , ու հոն Սիւրայէն օգնութիւն գտնալով վերին Խտալիոյ գաւառաց վրայ յարձրկիլ , որոնք արդէն տժգոհ ըլլալով իրենց կառավարիչներէն՝ ոտք կ'ելլային . և ասանկով նորէն արիւնահեղ պատերազմ մը կը բացուէր : Ըրդէն նոյն միջոցներուն եւրոպացի քաղաքական տեսչութեան ձեռքը ինկած էր Վաբուէոն զօրավարին թղթակցութիւնն որ կ'ընէր Վէպպիոսի թագաւորին հետ . այս թղթերէն այնպէս մը կ'երևար՝ որ մեծ դաւ մը պատրաստուած էր կայսերութիւնը դարձեալ հաստատելու ՚ի Վաղղիա , և

հետեւաբար Վաբուէոնը դարձընելու իր աքսորանքէն , և ՚ի նպաստ իրեն կուսակիցներուն . և կ'ընէին ալ թէ Վաբուէոն կողմն դաւաճանաց կեդրոնն՝ ու ժողովուելու տեղն եղած էր : Ընդ բաներս տեսնալով , մէկէն Վաղղիոյ երեսփոխանները ետեւէ եղան Վաբուէոնի համար մէկ ուրիշ աքսորանաց տեղ մը ընտրելու . և ահա Վաղղիա Սուրբ Հեղինէ կողմն առաջարկեց :

Վաբուէոն , որ աս ամէն բաներս տեղն ՚ի տեղը իմացած գիտէր , առանց ուշանալու իր մտքի դրած խորհուրդը սկսաւ առաջ տանիլ , և իրօք ալ գլուխ հանեց ամենայն յանդուգն յաջողութեամբ : Աւելոր որ իրեն բաւական եղաւ ամէն պատրաստութիւն տեսնալու համար : Բանի մը նաւով ու ձկնորսի նաւակներով՝ 1815ին փետրուարի 26ին , իր զօրաց նաւ մտնալէն չորս ժամ վերջը իրիկուան ժամը ու թիւն Վաբուէոնը կ'ընէր ձամբայ ելաւ : Ընդ զօրաց խումբը կը բաղկանար գրեթէ հազար հոգիէ , որոնց մէջ շատ լեհացիներ կային , հինգ հարիւր ինքնակամ կորսիկացիք , և քանի մըն ալ օտարականներ : Վաբուէոնը պաշտպանութիւնը Վաբուէոնի պետին թողուց . և տեղոյն բնակչացը յանձնեց իր Վաբուէոնի քոյրն և մայրը , որ հոն մնացին : « Յուսամ որ ձեռք զարկած գործողութիւնս յաջողի , ըստ անոնց : Ըմենեին մի վախնաք . եւ թէ պատերազմ ըլլալու ըլլայ , ձեզի օգնութեան զօրք կը խաւրեմ , որպէս զի սրաշտպանէն այս երկիրս , որ ինձի այն

չափ սիրելի է . ինչուան որ ինծմէ հրաման չգայ , որ և իցէ տէրութեան մը չյանձնէք կղզին , :

Ղամբայ ելլալու համար սահմանուած թնդանօթի հարուածը նետուելուն պէս , փոքրիկ նաւատորմիղը առագաստները պարզեց . քամին հարաւային արևելեան էր , որն որ խիստ յաջող էր աս ճանապարհորդութեանս , և կարծես թէ նորանոր յաջողութիւններու առհաւատչեայ մը կրնար սեպուիլ :

Մարտի 1<sup>ն</sup> նաւատորմիղը յիւանի նեղուցին մէջ խարխիս նետեց : յամը հինգին՝ յաբուէն Վաղղիոյ հողը ոտք կոխեց , և գնաց ձիթենւոյ մը տակ նստեցաւ , զորն որ նոյն կողմի գեղացիք մինչև ցայսօր ամէն օտարականներու կը ցուցընեն : Իսկ ինչ որ անկէ ետքը պատահեցան ետևէ ետև , այնպիսի խելքէ մտքէ չանցած գործողութիւններ են , որոնք ոչ ոք կրնար գուշակել . և իր այս ճանապարհորդութիւնը իբրև թէ առասպելախառն կ'երևայ , որովհետև անլուր յաջողութիւններով ու ծանր դժբաղդութիւններով խառն է , այլ իրօք յիշատակի և փառաց արժանի ճանապարհորդութիւն մը , որով յաբուէն Վաննի ափունքներէն Վիւլերուի անցաւ , Վիւլերուիէն Ուադերլու , և անկէց մորկածուփ ծովեր անցնելով՝ գնաց այն լերկ ու սպառնացող ապառաժին վրայ , զորն որ իրարու ձեռքէ կարծես թէ կը ջանան յափշտակել փոթորիկներն ու մրրիկները :

Երբուէն Ուրբ շեղինէ եղած միջոցը ուզեց իր Նլպա կղզիէն Վաղղիա դառնալուն պատճառները բացատրել : Իր Յեղափոխութեան մէջ ասանկ կը խօսի . “ Երբուէն միտքը դրաւ Վաղղիա դառնալ , երբոր իմացաւ որ թագաւորական կառավարութիւնը , չէ ուզած ընդունիլ Ֆինդէնրպլոյի դաշնադրութիւնը , և թէ ինչպէս ապօրինաւոր ու բռնաբարիչ կը սեպէր հասարակապետական և կայսերական կառավարութիւնները . որով բոլոր մատնիչները վարձատրութեան արժանի սեպել մըն էր : Եւ դարձեալ՝ ցուցընելու

համար թէ զինքը Նլպա քշելը աւերաւ բան էր , որովհետև Վաղղիա քսանըհինգ տարիէ ՚ի վեր ընդուններ և օրինաւոր սեպէր էր նաբուէնեան կառավարութիւնը , ու ամբողջ Նլրուպա հաւաներ էր աս բանիս : Երանց առաջուց մտածելու , առանց ուրիշներու հետ միաբանելու , և առանց պատրաստութեան ելայ Վաղղիա դարձայ : Երբոր տեսայ որ զօրաց բանակին ու աղգային ստացուածոց վրայ շատ բաներ կը խօսուէին ու կը գրուէին , և թէ բիւր վէճեր կ'ըլլուէին թագաւորական ուղիղ կամ երկրորդական ցեղերուն նկատմամբ , մէկէն ըսի . “ Վաղղիան իմն է , : Բայց ուրիշ կողմանէ՛ իմ Նլպայի մէջ անցուցած կեանքս շատ հաճոյական ու քաղցր էր . հոն քիչ ատենուան մէջ մէկ նոր տեսակ թագաւորութիւն մը ձևացուցեր էի , և բոլոր Նլրուպիոյ մէջ գտնուած երևելի մարդիկները կու գային զիս տեսնելու : Տարակոյս չկայ թէ պատմութեան մէջ նորատեսիլ դէպք մը եղած պիտի ըլլար որ կայսր մը՝ իր աթուէն վար ինչած՝ ամէն քաղաքականացեալ անձինքը իր դիմացը տեսնայ : Ոմանք կրնան ըսել ինծի՛ թէ դաշնակիցք զիս հոն չէին թողուր . իրաւունք ունին , և ահա ես ալ այն պատճառաւ փութացի դառնալ : Բայց թէ որ Վաղղիոյ կառավարութիւնը խելքով եղած ըլլար , թէ որ Վաղղիացիք գոհ ըլլային այն կառավարութեանէն , իմ ազդեցութիւնս բոլորովին կը փճանար , և ան ատեն պատմութեան մէջ միայն անունս պիտի յիշուէր , և տարակոյս չկայ որ Սեննայի մէջ ալ չէին մտածեր զիս իմ տեղէս խախտելու , :

Ուրիշ տեղ դարձեալ աս բանիս վրայ խօսելով կը զուրցէ՝ թէ “ Իմ վարպետութիւնս այն միայն եղաւ , որ լաւ կը ճանչնայի Վաղղիոյ վիճակն և Վաղղիացուց սիրտը . որովհետև ՚ի բաց առեալ Նպպետուայէր զօրավարը , որ բոլոր սրտով և ուրախութեամբ մը ինծի ընդ առաջ եկաւ , և մէկ ուրիշ մըն ալ , որ համարձակ և առանց քաշուելու

ինծի մեծամեծ ու անխարդախ ծառայութիւններ ըրաւ , գրեթէ բոլոր մէկալ զօրավարներս անհաստատ և խարդախ ճամբայ մը բռնեցին , և զօրաց ազդեցութեանը ու կամքին տեղիք տուին , թէ և առանց ինծի դէմ թշնամութիւն մը ցուցնելու : Եւ յօրուան օրս բոլոր աշխարհք գիտէ որ Վէյ թագաւորին հետ բոլորովին միացած՝ Ռարիզէն գնաց . ու թէ որ քանի մը օրէն վերջը նորէն անոր դէմ դարձաւ , ուրիշ բանի համար չէր , բայց եթէ՝ ստիպուեցաւ անանկ ընելու : — Սասնայի վրայ բնաւ վտահոտութիւն չունէի , անանկ որ երբ Վաղղիա հասայ՝ և ոչ կ'ուզէի հետը տեսնուիլ . և քիչ ժամանակէ ետքը երբոր Ռարիզու մէջ իրարու հետ տեսնուեցանք , հարցուցի իրեն որ եթէ ես շուտով Բարովանսէն չհեռանայի , արդեօք ինչ պիտոր ընէր ինքը . համարձակեցաւ ըսելու՝ թէ « Եւմկրնար անանկ դիւրաւ ըսել ինչ որ պիտի ընէի նէ » . և աւելցուց թէ « Ինչպէս լաւ ճամբայ բռնեցիր , որով հետեւ անկէ աւելի ապահով բան չըկար » : — Ան-Սիր՝ իրեն հրամանատարութեւր յանձնուած զօրքը հաւատարիմ պահելու ջանալուն համար , շատ մեծ վտանգի մէջ ինկեր էր : — Սուր ինքն իր բերնովը խոստովանեցաւ որ թագաւորին և անոր կառավարութեանը վրայ բոլորովին գոհ էր . և յունիսի Վէյ վերջը միայն սկսաւ դարձեալ ինծի ծառայութիւն մատուցանել : — Սագտոնալ և ոչ իսկ տեսնուեցաւ : — Պելլունի դուքսը թագաւորին հետ մէկ տեղ կանտ գնաց : — Ուրեմն եթէ Պուրպոնները իրաւունք ունեցան գանգատելու՝ զօրաց և ժողովրդեան իմ կողմն ըլլալով զիս պաշտպանելուն համար նէ , բայց իրաւունք չունին զօրաց գլխաւորներուն վրայ գանգատելու , որոնցմէ ոմանք կուովութեան գլուխ եղած էին , և շատն ալ կուովութեան և ուղ եկած մարդիկ , և որոնք քաղաքականութեան մէջ իրօք տղայք մնացին , թէպէտ և քսանըհինգ տարի նոյն կեսաց մէջ վարժեր էին . . :

Վաղղէն կը ջանայ դարձեալ ցուցնել այն օգուտները , որ կրնային առաջ գալ իր Վալպա կղզիէն դառնալովը : « Ետ մեծ սխալմունք ըրին ամէնքն ալ , կ'ըսէ , որ չկրցան ըմբռնել թէ ես Եւրոպիոյ խաղաղութեանն ու հաւասարակշռութեանը համար ամենակարևոր անձ մըն էի : Եւ թագաւորը աւելորդ տեղը և անպատճառ վախցան ինծմէ , և ասիկայ իրենց ծանրի պիտի նստի : Եւ Վալպայէն դառնալէս ետքը՝ նոր մարդ մը կ'ըլլայի ու բոլորովին կը փոխուէի , բայց իրենք աս բանիս չհատացին . և չկրցան հաւանիլ որ մարդ մը կարենայ իր բարքը փոխել , ու ժամանակին բռնադատիչ պարագաներուն յարմարիլ : Եւրդէն ես աս բանս անձիս վրայ փորձեր էի , և բաւական օրինակներ ալ տուեր էի : Ինչպէս որ կրցայ դիկտատորութեան պաշտօնը կատարել և մեծամեծ գործքեր գլուխ հանել , ասանկ ալ կրնայի սահմանադրական կառավարութեամբ թագաւոր մը ըլլալ և խաղաղութեան պաշտօնեայ : » Ինչ մըն ալ խօսինք հոս թագաւորաց ու ազգաց իմ վրայօքս ունեցած մնտտի վախերնուն նկատմամբ : — Եւրդեօք ինչ պատճառի համար թագաւորը կը վախեին ինծմէ : Եւ իթէ իմ փառասիրութեանս , աշխարհակալութեանցս , կամ տիեզերական իշխանութեանս համար : Եւ այց աս ալ պիտի գիտնային որ իմ ուժս ու զօրութիւնս առջինին պէս չէր . և դարձեալ ես զիս պաշտպանելու համար միայն այնչափ յաղթութիւններ ու աշխարհակալութիւններ ընելու ստիպուեր էի : Եւ սիկայ այնպիսի ճշմարտութիւն մըն է , որ որչափ ատեն անցնի , այնչափ աւելի մարդիկ պիտի ըմբռնեն : Եւրոպա ոչ երբէք դադրեցաւ՝ Վաղղիոյ , իր սկզբանցը և ինծի դէմ պատերազմ ընելէն . հարկաւ պէտք էր որ ամենայն ջանք ընէինք իրենց յաղթելու , ամէն վտանգ յանձն առնելով : Եւ զի դէմ միշտ ազգաց միաբանութիւն մը կար . թէպէտ և երբեմն յայտնի , երբեմն ծածուկ , երբեմն պատրուակեալ և երբեմն ալ իրենք իրենցմէ կը

խոստովանէին : Մեզի խաղաղութիւն չնորհելը՝ դաշնակցաց ձեռքն էր . իսկ մենք արդէն յողմած էինք , և Վաղղիացիք կը սոսկային նորէն աշխարհակալութեանց ձեռք զարնելու : Բրդեօք մտքերնին դրամձ էին թէ ես հանգիստ ու խաղաղ կեանք անցընել չեմ սիրեր , և իմ անձիս փառքովն ու պատուովը ապրել : Բզգային երկու խորհրդարաններուն ձեռքով կրնային արգիլել զիս , որ ալ անկէ ետքը հռենոս գետը չանցնիմ : Եւ ինչո՞ւ անցնիլ պիտի ուզենայի . միթէ տիեզերական իշխանութիւն մը ձեռք ձգելու փափաքով . բայց կարծեմ որ ոչ երբէք կատարեալ նշան մը տուեր եմ խենթութեան : Որչափ ալ մէկը անխելք մարդ մը եղած ըլլար , ատանկ յիմարական և չըլլալու բանին ոչ երբէք ձեռք կը զարնէր՝ յետ որոյ որ այն կերպով ու հանգամանքով ես լապայէն դարձայ : Երով յայտնի է թէ թագաւորք իմ զէնքերէս վախնալու պատճառ մը չունէին :

« Բրդեօք կը կարծէին որ ես անիշխանութեան սկզբունքներով իրենց երկիրը կը լեցընէի . բայց արդէն փորձով գիտէին իմ այս բանիս վրայօք ունեցած կարծիքս : Տեսեր էին իրենք որ բոլորին երկիրներուն ալ տիրեր էի . որչափ անգամներ ալ յորդորեր էին զիս մէկը մէկալը այն երկիրներուն մէջ խռովութիւն հանելու , կառավարութեան կերպը փոխելու , և հպատակնին ապստամբեցընելու : Թէպէտ և ինծի՛ նոր Արիւս և Ձիւոր Ռոպէսիէր անունները դրուեցան , սակայն իրենք լաւ գիտեն... թող սրտերնին մէյ մը քննեն : Թէ որ իրօք այնպէս եղած ըլլայի , հաւանական էր որ դեռ կը թագաւորէի . բայց իրենք ապահովապէս և երկար ժամանակէ՛ ի վեր թագաւորութիւննին կորսընցուցած պիտի ըլլային : Եւ այն ատենուն մեծ խնդրոյն նկատմամբ , որուն բացարձակ գլուխն էի ես , երկու կերպ կար գործելու . կամ ժողովուրդներու ձեռքով թագաւորաց խօսք հասկըցընել , և կամ ժողովուրդները հանգարտեցընել ու խոնարհեցընել թագաւորաց ձեռքով : Տարակոյս չկայ որ շատ դժուարին բան է չափի մէջ բռնել ժողովուրդները , երբ մէյ մը որ ոտքի վրայ ելած են . ասով աւելի բնական էր որ թագաւորաց իմաստութեանն ու խոհեմութեանը վրայ վստահեցընէր մարդ . ես կարծէի որ իրենց ասանկ յայտնի օգուտները տեսնելու չափ կրնան մտածել իրենք . բայց խաբուեցայ : Իրենք ամենեւին մէկ բանի մը վրայ փոյթ չըրին . և իրենց կրթովը կուրացեալ՝ ժողովուրդը ինծի դէմ հանեցին , զորն որ ես զսպեր էի իրենց դէմ չելլելու : Բայց պիտի տեսնան , . . . »

« Ես ասանկ կը մտածէի՝ Երբեք զանազան կերպին վրայօք , որոնք իրենց դէմ միացեր էին իր լապա կղզիէն դառնալէն ետեւ : Երբ , իր խօսքը ժողովուրդոց վրայ դարձընելով կ'ըսէ . « Ինչո՞ւ համար պիտի սարսափէին արդեօք ինծմէ . իբրև թէ պիտի երթայի զիրենք կողոպտելու , կամ ազատութիւննին վերցընելու համար : Բայց ես իրենց իրաւանցը ու խաղաղութեան իբրև մեծից մը կու գայի . այս նպրոքութեամբս միայն զօրանալու վրայ էի . և ասոր դէմ ընելս , զիս կործանել ըսել էր : Եւ սակայն նաև Վաղղիացիք ալ սկսան վախնալ ինծմէ , ու այն միջոցին որ պատերազմի միայն պէտք էր՝ սկսան վիճաբանութիւններու ձեռք զարնել , և երբոր պէտք էր ամենայն կերպով միաբանիլ ու ջանալ օտարաց դէմ՝ սկսան պառակտիլ : Միթէ աւելի լաւ չէր որ օտարի լուծին տակ իյնալու տեղ , զիս իրենց գլուխ ունենալու կարծեցեալ վտանգներուն մէջ դնէին ինքզինքնին : Միթէ աւելի դիւրին չէր ինքնիշխան տիրապետողի մը , բռնաւորի մը լուծը վրաներնէն թօթվել , քան թէ ամէն միացեալ ազգաց ծանր շղթաները : Եւ ամենգը միշտ նոյն եղաւ , կուր ահաւոր , և չփութութիւն մը ծագելու վրայ էր . անոր համար անհրաժեշտ հարկաւոր էր գիկտատորութիւնը : Հայրենեաց փրկութեան համար հաստատեցի զայն՝ երբոր լայնցիկէն

« Ես ասանկ կը մտածէի՝ Երբեք զանազան կերպին վրայօք , որոնք իրենց դէմ միացեր էին իր լապա կղզիէն դառնալէն ետեւ : Երբ , իր խօսքը ժողովուրդոց վրայ դարձընելով կ'ըսէ . « Ինչո՞ւ համար պիտի սարսափէին արդեօք ինծմէ . իբրև թէ պիտի երթայի զիրենք կողոպտելու , կամ ազատութիւննին վերցընելու համար : Բայց ես իրենց իրաւանցը ու խաղաղութեան իբրև մեծից մը կու գայի . այս նպրոքութեամբս միայն զօրանալու վրայ էի . և ասոր դէմ ընելս , զիս կործանել ըսել էր : Եւ սակայն նաև Վաղղիացիք ալ սկսան վախնալ ինծմէ , ու այն միջոցին որ պատերազմի միայն պէտք էր՝ սկսան վիճաբանութիւններու ձեռք զարնել , և երբոր պէտք էր ամենայն կերպով միաբանիլ ու ջանալ օտարաց դէմ՝ սկսան պառակտիլ : Միթէ աւելի լաւ չէր որ օտարի լուծին տակ իյնալու տեղ , զիս իրենց գլուխ ունենալու կարծեցեալ վտանգներուն մէջ դնէին ինքզինքնին : Միթէ աւելի դիւրին չէր ինքնիշխան տիրապետողի մը , բռնաւորի մը լուծը վրաներնէն թօթվել , քան թէ ամէն միացեալ ազգաց ծանր շղթաները : Եւ ամենգը միշտ նոյն եղաւ , կուր ահաւոր , և չփութութիւն մը ծագելու վրայ էր . անոր համար անհրաժեշտ հարկաւոր էր գիկտատորութիւնը : Հայրենեաց փրկութեան համար հաստատեցի զայն՝ երբոր լայնցիկէն

դարձայ : Այս անհատը նոյնը դարձեալ պետք էի ընել Այլպա կղզիէն դառնալէս վերջը : Իսկ չունելուս պատճառը այն եղաւ որ հաստատութիւն և ուժ չունեցայ իմ կարծեացս մէջ , և կամ թէ աւելի ըսեմ՝ Վաղղիացւոց վրայ բաւական վստահութիւն չունեցայ :

» Պատմութիւնը պիտի արդարացընէ զիս , դասելով զիս անձնուրաց ու անշահասէր մարդկանց կարգը : Ինչպիսի հրապոյրքներ իմ առջևս չգրաւ Խտալիոյ բանակը : Ընդդիմ , Ըմիանի դաշնադրութենէն ետքը առաջարկեց որ ես Վաղղիոյ թագաւոր ըլլամ : Յանձն չառի Շ ադիլեօնի դաշնադրութիւնը . նոյնպէս դարձեալ չուզեցի դաշնադրութեան մտնալ Ուաղերլուի մէջ : Ինչո՞ւ համար . վասն զի ասոնց և ոչ մէկն ալ հայրենեաց օգուտ մը ունէր , իսկ ես ուրիշ վախճան չունէի՝ բայց եթէ հայրենեաց պարծանքը մտածել , որ է ըսել իրեն փառքը , իր իշխանական ազդեցութիւնն և իր մեծութիւնը : Այս անհատը միայն ասոր համար է որ այնչափ թշուառութիւններէ ետքն ալ Վաղղիացւոց սրտին մէջ միշտ կենդանի եմ : Ըստ բանս իրենց կողմանէ գրեթէ բնածին զգացմունք մըն է , և արդարութեան պարտք մը : Հուսկ ուրեմն , խորհրդարաններն ու նոր սահմանադրութիւնը բաւական ապահովութիւն մը չէին ազգին ձեռքը : Այս չունէի իմ կարգադրութեանս տակ միլիոնաւոր բազուկներ . ես առանձին մարդ մըն էի միայն : Ինչպէս որ ուրիշներու ուզելովը նորէն բարձրանալու վրայ էի , այսպէս ալ ուրիշներու կամքովը կրնայի նաև վար իյնալ : Ըստպիսի վտանգաւոր դրից մէջ ըլլալով , ինչ կրնայի ես շահել » :

Յետոյ մարգարէական ոգւով մը այսպէս կը խօսի ապագային վրայ . « Այրբ որ Այլպա կղզին թողուցած Վաղղիա դարձայ , հարկ կ'ըլլայ որ նորէն ըսեմ , մեծապէս անիրաւեցան ինձի դէմ ժողովուրդք և թագաւորք : Այս թագաւորներուն սասանեալ գահը ամրացուցեր , և անվաստակար ազնուականնե-

րուն կողմը զօրացուցեր էի . և արքունական գահերն ու ազնուականները կրնան նորէն վտանգի մէջ իյնալ : Այն թէ ես դարձեալ թագաւորական անթողին վրայ հաստատուէի , թագաւորաց կողմը բռնելով յօժար սրտիւ , տարակոյս չկայ որ թագաւորաց և ժողովուրդոց մէջի եղած զժտութիւնը կը վերցուէր , և երկու կողմին ալ աղէկ կ'ըլլար : Իսկ այսօրուան օրս դեռ խընդիրը որոշուած չէ , և կրնայ ըլլալ որ ոչ մէկը և ոչ մէկալը վաստակի : Ըմէն բան կրնար լինեցած ըլլալ . բայց հիմա ամէն բան ալ կրնայ նորէն սկսիլ : Արքային հաստատուն ու երկարատե խաղաղութիւն մը ձեռք ձգել , մինչդեռ հիմա բաւական է մէկ փոքրիկ կայծ մը ընդհանուր խռովութեան հրդեհ մը բորբոքելու համար : Ո՛հ , որչափ խեղճ ու ողորմելի է մարդկութիւնը » :

Ընդ այս կերպով կը խօսէր Սեօն Վաղղիոն հեռաւոր արքայանաջը մէջ իր Այլպա կղզիէն դառնալուն հետեւանացը վրայ . այն դարձին , որն որ ոմանց վրայ սարսափ ձգեց , և այլոց ալ նշան սեպուեցաւ աշխարհակալութեց , փառաց ակնկալիք մը , և երջանկութեան յոյս մը :

Նիկողայոս Զուկն ( Իտ . Բէշէ ) :

Հնգետասաներորդ դարուն վերջերը՝ Սիկիլիոյ փրեդերիկոս թագաւորին ժամանակը Սիկիլոյոս անուամբ անուանի լողացող մը կար , որ իրեն լողալու զարմանալի ճարտարութեամբ և ջրին տակ կը խիստ երկար ատեն յարատեւելովը Ձուկն անուանած էր :

Ըստ մարդս , որուն վրայ հրաշալի բաներ կը պատմուին , իր պղտիկութենէն ՚ի վեր սովորած էր կեանքը ծովուն մէջ անցընելու , և իր սակաւապետ պիտոյքը բուստ և ոստրէ որսալով ու ծովափը գեղացւոց ծախելով կը ստանար : Ըստ ջրին վրայ երկայն ատեն մնալու վարժութիւնը այն աստիճանի հասած էր , որ ինչուան նաև հինգ օր և աւելի